

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԱՔՈՒԿՅԱՆ

ԵՐԿԱԹԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Մարդկության պատմության ընթացքը քննելիս հանդիպում ենք ինչպես բնածին, այնպես էլ մարդկային մտքի ու ձեռքի արգասիք հանդիսացող բազմաթիվ երևույթների, որոնք ժամանակի ընթացքում ստացել են պաշտամունքային արժեք: Եվ յուրաքանչյուր մասնավոր պարագայում ի հայտ է գալիս տվյալ պաշտամունքային առարկայի կամ երևույթի պատմասոցիալական խոր արմատները, տնտեսական հիմքն ու անհրաժեշտությունը:

Վաղնջական ժամանակներում անիմիստական ու տոտեմիստական պատկերացումներն, անկասկած, պայմանավորված էին նախամարդու բընությունից ունեցած աներկբա կախվածությամբ: Կրակի, ջրի, քարի պաշտամունքները ևս հիշյալ տարերքների նկատմամբ մարդու անզորության դրսևորումներն էին:

Շատ հաճախ պաշտամունքային նշանակություն էին ձեռք բերում նաև մարդկային աշխատանքի արգասիքները, որոնք այս կամ այն կերպ կապվում էին բնության առավել խորհրդավոր ու անբացատրելի երևույթների հետ:

Այս պարագայում, անշուշտ, առաջին շարքի վրա է մետաղների պաշտամունքը: Ինչպես իրավացիորեն նշում է Խ. Սամուելյանը «մետաղը դարձավ այն հզոր ուժը, որը հեղափոխեց մարդկության պատմությունը, հիմնովին կատարելագործեց արտադրության միջոցները, հուժկու թափ հաղորդեց հասարակական ձևերի զարգացմանը, խոր ակոսներ փորեց սոցիալական շերտավորումների մեջ»[1]: Մետաղահանությունն ու մետաղաձուլությունը, որի աշխատանքային գործընթացներն անմիջականորեն կապվում էին չորս տարերքներից երկուսի հետ (հող (ընդերք) և կրակ) անպայմանորեն բարերար հիմք էին ստեղծում ծիսա-հմայական և պաշտամունքային մտածողության ձևավորման համար: Սակայն բոլոր արդյունահանվող ու ձուլվող մետաղներից (ոսկի, արծաթ, բրոնզ, պղինձ, երկաթ) առավել մեծ պաշտամունքային նշանակություն է ունեցել երկաթը: Երկաթաձուլության տեխ-

նոլոգիան լինելով առավել բարդ և վարպետություն պահանջող, իսկ ինքը՝ երկաթը[2] առավել ամուր և դիմացկուն մնացյալ մետաղներից, ինքըստինքյան պիտի հարգանք ու գնահատանք ներշնչեր հիշյալ մետաղն օգտագործողներին: Պատահական չէր, որ «երկաթագործ դարբինները համարվում էին խորհրդավոր ուժ, մոգական ընդունակություն ունեցող մարդիկ: Սրանք ոչ միայն շիկացած երկաթից մուրճի ու սալի միջոցով կոփում էին զանազան զենքեր, որոնք իրենց ամրությամբ և հատու սայրով գերազանցում էին նախորդ բոլոր զենքերն ու գործիքները, այլև նույն մուրճի ու սալի միջոցով կախարդական ազդեցություն կարող էին ունենալ մարդկանց կյանքի զանազան երևույթների վրա: Այդ հիման վրա դարբիններին էր վերագրվում նաև բժշկական ընդունակություններ»[3]:

Դարբնությունը, որպես երկաթի մշակման հետ կապված արհեստ Հայաստանում երևան է գալիս մոտավորապես երրորդ հազարամյակի 2-րդ կեսից (Ն. Ք.)[4]:

Այս շրջանից էլ հայտնի է նաև դարբնապաշտությունն ու երկաթապաշտությունն ոչ միայն Հայաստանում, այլև ողջ արևելքում: Գիտնականներից ոմանք (Ժ Մորգան, Տ. Ռիքարդ և այլք)[5] գտնում են, որ երկաթի մշակման և ընդհանրապես մետաղաձուլության կենտրոնը եղել է Կովկասը:

Եգիպտական գրավոր հուշարձաններում երկաթի հիշատակությունը հանդիպում է Ն. Ք. 13-րդ դարում[6]:

Ասորական Սարգոն երկրորդի (722—705 թթ. Ն. Ք.) պահեստներում հնագետները գտել են 160 հազար կգ երկաթ, որ ձեռք էր բերվել հայկական Արարատյան թագավորության (Ուրարտու) վրա կատարած արշավանքի ժամանակ[7]:

3-րդ, 2-րդ հազարամյակներում (Ն. Ք.) ասորեստանցի վաճառականները երկաթը գնահատում էին արծաթից 40 անգամ, իսկ ոսկուց 8 անգամ թանկ[8]: Ինչպես վկայում է Թութանհամոն փարավոնի դամբարանը պեղող հնագետ Հ. Կարտերը, արքայի մումիան «պեղելիս» նրան հանդիպած բազմաթիվ հմայիլներից մեկը «...երկաթից էր: Հմայիլը պատկանում էր Եգիպտոսի ամենավաղ շրջանի երկաթե առարկաների թվին, և... պետք է նկատել, որ ոսկով լեփլեցուն դամբարանում հենց այս համեստ երկաթը ամենաարժեքավորն էր մշակույթի պատմության մասնագետի տեսանկյունից»[9]: Հիշենք, որ Թութանհամոնի թագավորությունը գիտնականները նշում են մոտավորապես 1350-ական թվ. Ն. Ք.:

Հեթիթական Անիթթա թագավորին նվեր էին տվել երկաթե գահ, իսկ հեթիթական բնագիրները հիշատակություններ են պահում երկաթե սրբազան օջախի մասին[10]:

Ըստ հին հրեական ավանդության երկաթը դժբախտության, ստրկության, բայց և դիմացկունության և վճռականության խորհրդանիշ էր[11]:

Հայաստանում երկաթի ու դարբինների պաշտամունքը, թերևս, ամենաուժեղն է եղել վերոհիշյալ բոլոր աշխարհագրական գոտիներից: Այն ոչ միայն երկար է պահպանվել ժողովրդական մտածողության, բանահյուսության և հավատալիքների մեջ, այլև անցնելով վաղ քրիստոնեությանը ամրապնդվել պաշտոնապես, որոշ վերապրուկներ դրսևորելով ընդհուպ մինչև 20-րդ դար: Սրա գլխավոր պատճառն, անտարակույս, այն է, որ, ինչպես ասվեց, երկաթագործության (և մետաղաձուլության ընդհանրապես) օրրանը եղել է Կովկասը և, ի մասնավորի, ու հիմնականում՝ Հայկական լեռն-

աշխարհը: Դրա անվիճելի ապացույցները բերում են բազմաթիվ ուսումնասիրողներ:

Երկաթը նախապես հայտնաբերվելով երկնաքարերի մեջ, ի սկզբանե դիտվել է որպես երկնային մետաղ և կավկել երկնքի հետ: Այստեղից էլ, ըստ որոշ գիտնականների, **երկ**-ինք=**երկ**-աթ=**երկ**-նել=**երկն**=**երկ**-ունք և այլն[12]: Ն. Մառը գտնում է, որ, իբր երկաթ բառի արմատը հաբեթական է՝ RKN|RKD և այդ արմատից են գոյացել նաև հայկական **երկինք**=erk-in, որ բառացի նշանակում է ԵՐԿԱԹ և **երկիր**=erk-ir, որ նույնպես ԵՐԿԱԹԻ նշանակություն ունի[13]:

Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան սահմաններում բնակվող խալիբ ցեղի անունով հին հույները ճանաչում էին երկաթի լավագույն դարբնած տեսակը (պողպատը), որը հենց կոչվում էր ԽԱԼԻՊ, իսկ մի այլ հայտնի երկաթագործ ցեղի՝ մոսոխների անվանումի տառերի դրափոխությունից առաջացած «ՍՈՄԵԽԻ» անունը վրացերենում հայ է նշանակում[14]:

Ստրաբոնի վկայությամբ խալիբները ապրում էին Քուռ և Արաքս գետերի վերին մասերում, այսինքն Հայկական լեռնաշխարհի գրեթե կենտրոնական մարզերում: Ոմանք ենթադրում են, որ խալիբները խալդական ծագում ունեն, իսկ հնագիտական տվյալներով հաստատված է, որ հենց խալդական ժողովուրդների մշակույթի մեջ էր երկաթագործությունը զգալի տեղ գրավում և որոշիչ դեր խաղում նրանց զարգացման գործում[15]:

Ըստ գերմանացի հայագետ Յ. Կարստի կարծիքի, հայկական ԵՐԿԱԹ բառը հին հայ ժողովրդական ստուգաբանությամբ պարունակում է նաև միստիկական նշանակություն: «Երկաթագիր» բառը նա ոչ միայն կապում է լոկ երկաթե սրածայր ձողիկով գրելու գործընթացի հետ, այլև այն համարում որպես վաղնջական տերմին հին մեհենական նշանագրերի համար: Մի բան, որ հետո փոխանցվել է Աստվածաշնչի հայկական թարգմանության և. Մեսրոպյան գրերին իբրև սրբագործված նշանագրաձև:

Այնուհետև ԵՐԿԱԹ բառի որոշ բարբառներում հնչող ՕՐԿԱԹ ձևը նա ստուգաբանորեն փորձում է համեմատել հին հունական հնամահնչուն մի բառի հետ, որ նշանակում է ԿՐՈՆԱԿԱՆ ԾԵՍ ԿԱՏԱՐՈՂ, ՄԻՍՏԻԿ, ԽՈՐՀԸՐԴԱՎՈՐ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ, ՄԻՍՏԵՐԻԱ, ԳԱՂՏՆԻՔ: Այս բառերի սեմանտիկ բովանդակությունը բնորոշում է դարբնության խորհրդավորությունը[16]:

Դարբնության, երկաթի, պողպատի հետ կապված հայ ժողովրդական հավատալիքները բազմաբնույթ են: Դրանք հանդիպում են Հայաստանի ազգագրական բոլոր գոտիներում առանց բացառության և շատ կենսունակ են ցայսօր:

Դարբինների պաշտամունքի ամենաբազմազան փաստերի գրառումներ ունեն անցյալ դարի հայկական ամենատարբեր շրջաններն ուսումնասիրած ազգագրագետներ:

Դարբինը համարվել է ծիսահմայական գործողության ամենազոր մասնակից իր մուրճով ու սալով, որը հնազանդեցնում է կրակը և մետաղից իրեր պատրաստում՝ դարձյալ կրակի օժանդակությամբ: Բայց կրակը թափվում էր երկնքից (կայծակ, շանթ), կամ ելնում երկրի խորքից (հրաբուխ) և իր հետ բերում ավեր ու չարիք: Այն բերում էր նաև երկաթ (երկնաքարեր կամ լավա): Հետևաբար կրակ ու երկաթ հնազանդեցնող դարբինը շանթի ու կրակի աստվածի հետ կապված մի էակ է, որը գիտե կրակը հմայելու գաղտ-

ևիքը: Դարբինների ֆիզիկական ուժի ներշնչած պատկառանքը ևս նվազ դեր չի խաղացել նրանց իդեալականացնելու գործում:

Դարբինների պաշտամունքն ապացուցող փաստերից Արտավազդի առասպելում հիշվող դարբինների սալին երեք անգամ խփելու գործողությունը, որի ժամանակ «ի ձայնէ կռանարկութեան դարբնաց զօրանան, ասէն, կապանքն (Արտաւազդայ)»[17]: Մ. Աբեղյանը նշում է, որ Արտավազդին շղթայող քաջքերը հիշեցնում են գերմանական էլբերին, ու թեև դրանք դարբիններ չեն, սակայն «արդյոք քաջքերի այդ դարբնելու մի նշանակը չե՞ն կատարել մեր դարբինները կռանը սալին բախելով»[18]: Հետաքրքիր է, որ Աբխազիայում դարբինները համարվել են Ծաշվայի (Աբխազական դիցարանի երկրորդ կարևոր չաստվածի) քրմերը: Այս առումով Մ. Աբեղյանի կարծիքը բնական ու համոզիչ է երևում և բերում է այն խորհրդածությանը, թե ո՞ւմ քրմերը կարող էին լինել մեր դարբինները: Արդյո՞ք Վահագնի, թե՞ մի այլ չաստվածի, որի «անունը մոռացված է, իսկ նրա գործակից քաջքերինը պահված մինչև այսօրվան օրս»[19], որը և (բացառված չէ այս տարբերակը նույնպես) իր ֆունկցիաների շնորհիվ նույնացել է Վահագնին, տալով նրան իր հատկությունների մի մասը:

Դարբինների պաշտամունքի արձագանք է նաև Դարբնաց քարը Անձևյաց գավառում, որի մասին վկայվում է, թե «կռանաձայնս դարբնաց ահաւոր հրաշիւք եւ զարհուրանօք գործէին»[20]:

Դարբինների և երկաթի պաշտամունքը ամենասերտ աղերսներն ունեն իրար: Սովորաբար երկաթը ժողովրդական հավատալիքային համակարգում ունի երեք դրսևորում՝ ծիսա-հմայական, պահպանիչ-չարխափան և բուժիչ:

Հիմնականում այս ֆունկցիաներն ունեին դարբնած երկաթն ու երկաթե իրը: Գեմատիտից պատրաստված հմայիլները, որ կիրառվում էին հին արևելքում (Եգիպտոս, Միջագետք և այլն) Հայաստանում համարյա տարածված չեն եղել:

Երկաթի ծիսա-հմայական գործողություններից հիշատակելի են օրինակ հետևյալները. իբր կարելի էր քաջքին գերի բռնել, եթե վրան ասեղ խրվեր[21], կարկուտի, ուժեղ անձրևի, կայծակի ժամանակ խաչերկաթը կամ մի այլ երկաթե առարկա գցում էին դռանը (Բուլանըխ, Վան, Զավախք, Զմյուռնա և այլն)[22]: Հավատում էին, որ եթե երբևէ երկաթի վրա ջուր լցնես և մեկին անիծես՝ անմիջապես կկատարվի[23]: Պատկվելուց առաջ փեսային լողացնում էին ու տակը մի թուր դնում, որպեսզի չարքերը (քաջքե՞րը) չվնասեն նրան[24]: Հովհան Մանդակունին այսպիսի տող ունի «Դյոթք կոչէն զդևսն, յաղ, յերկաթ, ի ջուր, ի նարօտս»[25]:

Կայծակը ժողովրդի կողմից ընկալվել է իբրև ԵՐԿԱԹԵ ԶԵՆՔ, կամ ԵՐԿԱԹԵ ՃԻՊՈՏ, որ հրեշտակները նետում են չարքերի վրա: Ըստ այդմ շիկացած երկաթի իմաստ ունի և շանթը, որ նշանակում է «ոչ միայն կայծակ, այլև երկնքից թափվող կրակ ու երկաթ, ապա՝ շիկացած երկաթ, ինչպես նաև՝ խաչերկաթ: **Այսպիսով ամպրոպային աստծու զենքերը քարերն են՝ հրեղեն փայլուն քարերը, երկաթը՝ հրեղեն շիկացած երկաթը»**[26] (ընդգծումն իմն է—Հ. Թ.):

Այս բացատրության հաստատումն է նաև այն հավատալիքը, որ ամպրոպի ժամանակ մի ձեռքով գլխի վրա քար են պահել, մյուսով ատամների արանքը՝ ասեղ և կրկնել «Քարագլուխ, երկաթակեռիք»[27]: Այս երկու բառը հավանաբար հնագույն հմայական-պահպանիչ աղոթքի մնացորդ է: Այդ

աղոթքները որպես կանոն եղել են կարճ և պարունակել են հիմնական բառ-խորհրդանիշերը[28]: Սովորության հնության վկայությունը ապացուցվում է նաև աղոթքի համառոտությամբ:

Պահպանական և բուժական ֆունկցիաները հանդես են գալիս հաճախ միախառնված: Վերը նշված հավատալիքը զուտ պահպանական է: Կան ուրիշները ևս: Օրինակ, հանրահայտ է երկաթը որպես դևերի դեմ պահպանական միջոց դիտելու հանգամանքը: Պողպատե ապարանջաններ կամ մատանիներ էին կրել, երբ հարկ է եղել ամայի վայրերում մենակ մնալ, պաշտպանվելու համար դևերից ու քաջքերից, քանզի չար ոգիները նաև ցերեկներն էին հայտնվում, երբ մարդ մենակ էր լինում: Երկաթը պահպանակ էր նորածին երեխա ունեցող կանանց՝ ընդդեմ ալքերի, սատանաների ու դեվերի: Նույնիսկ այսօր երեխայի բարձի տակ դրվող դանակները, նորապսակների և ֆիզիկական թուլակար ամոլների անկողնու տակ բաց մկրատ դնելը երկաթի պաշտամունքի վերապրուկների ակնհայտ ապացույցներ են:

Շատ ավելի լայն ու հետաքրքիր է բուժական կիրառությունը[29]: Այստեղ ավելի շատ ենք հանդիպում տաբուների, որոնք դրսևորվում են ոչ միայն գործողությունների, իրավիճակների, այլ նաև խոսքի որոշակի միավորների (աղոթքային բանաձև, անուն և այլն), ընդգծված լռության (խոսքի բացակայություն) կամ ժամանակի պահի սրբացման մեջ:

Երկաթի որպես բուժիչ միջոց կիրառելը խորը արմատներ ունի: Քրիստոնեությունը տարածվելով Հայաստանում երկաթի ու դարբնության նկատմամբ եղած ժողովրդական հավատալիքները չկարողանալով վերացնել՝ ներմուծեց իր «զինանոցը»: Այսպես, օրինակ, «բուժում» կատարելիս երկաթեղեն օգտագործելու ժամանակ ասվել են աղոթքներ, որոնց նախաքրիստոնեական լինելն ակներև է, և դրանց մեջ եղած ս. Տիրամոր ու Հիսուս Քրիստոսի կամ որևէ սրբի անվան հիշատակումը զուտ նորամուծություն է՝ արված 301 թվականից հետո: Ահա մի քանիսն այդ աղոթքներից.

«...Գնա մտիր սուրբ Սիմեոնին,
Առ երկթե ժնջիլ, պոպտե բալնիք,
Դիր գողն ի ոտին, գելն ի բերան
Եվ ամենայն ջանավարին,
Որ ժուռ կգան մեջ գիշերին»[30]:

Ծննդկանի հմայական աղոթքում դիմում են ս .Տիրամորը նրանից ստանալով պատասխան.

«...—Կերթամ տուն հիվընդին,
Էրթիկը ծննդկանին:
Ժնճիլ ցկեմ վրա պատին,
Բրիչ (կամ բալնիք) ցկեմ քուրի բարձին,
Որ ամենայն չար խափանին,
Որ չմարի սիրտը փորին,
Որ չկլորի լեզուն բերնին»[31]:

Տիրամոր (կամ մեծ մոր) ուղղված նախաքրիստոնեական աղոթքները նվիրված են եղել Անահիտ չաստվածուհուն, որոնցից շատերն ուղղակիորեն անցել են Մարիամ Աստվածածնին՝ տոների ու սրբատեղիների հետ

միասին[32]: Անահիտի առնչությունները երկաթի հետ մեզ բերում են մի այլ, խիստ ուշագրավ փոխառնչական շարքի՝ Վահագն չաստվածի հետ: Հայտնի է, որ Վահագնը հայ հին դիցարանում Արևի, Կրակի և Ռազմի չաստվածն էր: Նա Արամազդի ուստրն էր դիտվում[33], իսկ Անահիտը՝ Արամազդի դուստրը, որոշ սկզբնաղբյուրներով՝ նաև կինը: Տրդատի հրովարտակում, օրինակ, որը նշում է Ագաթանգեղոսը, այսպիսի տողեր են եղել. «Լիութիւն պարարտութեան յարոյն Արամազդայ խնամակալութիւն յԱնահիտ տիկնոջէ, և քաջութիւն հասցէ ձեզ եւ քաջէն Վահագնէ ամենայն հայոց աշխարհիս»[34]: Անահիտի ու Վահագնի անվանումների միասին հիշատակելը եզակի երևույթ չէ, և այս հաճախականությունը վկայություն է նաև նրանց ֆունկցիաների առնչության:

Անահիտը պտղաբերության, մայրության, առատության, տղամարդկային արգասավորության չաստվածուհի լինելու հետ մեկտեղ ունի նաև ռազմի հովանավոր չաստվածի հատկություններ[35]: Կ. Մելիք-Փաշայանը գտնում է, որ Վահագնի պաշտամունքը ավելի ուշ է ձևավորվել և ռազմի չաստվածի ֆունկցիաները նրան են անցել Անահիտից: Եթե հիշենք Մ. Աբեղյանի վարկածը, ըստ որի Վահագնին են անցել «քաջքերի դասը», որոնք ուղեկցել են նրանից առաջ եղած որևէ այլ չաստվածի, ապա այս կարծիքը խիստ հետաքրքրական է դառնում: Ուշագրավ է, որ Անձևաց գավառի մեր արդեն նշած Դարբնաց քարում եղել է Անահտական մեհյան, որին վերագրվել է բուժման հատկություններ, և որի տեղում քրիստոնեական շրջանում ս. Մարիամ Աստվածածնին նվիրված վանք է կառուցվել՝ Հոգեաց վանք անունով: Դարբնաց քարում «բժշկության գործը անցել է **դարբիններին** (ընդգծումն իմն է—Հ. Թ.), որոնք կրակի օգնությամբ, իբր թե կարողանում էին բուժել մի քանի հիվանդություններ»[36]:

Այս վայրի Անահտական մեհյանի քրմերը կոչվել են դարբին, «քանզի անագին աղմուկ էին հանում իրենց կռանահարությամբ և վառ պահում լեռան պաշտամունքը բնակիչների մեջ»[37]: Հոգեաց վանքում բուժվում էր լուսնոտությունը[38], մի հիվանդություն, որն անշուշտ, կապված էր մագնիսականության, լուսնի մագնիսական դաշտի և այլ նման երևույթների հետ: Լուսնոտությունը (somnambulismus) լինում է երկու տեսակ՝ նյարդային, որը հանդիպում է միայն մանուկների մոտ, և նոպայական, բռնկումային, (пароксизмальный), որը ընկնավորության արդյունք է (Էպիլեպսիա)[39]: Ընկնավորներին ժողովուրդը «տիրամոր հիվանդ», «տիրամոր զարկած» է կոչել, և նման հիվանդների բուժման համար գործածել են նաև դարբնի պատրաստած մետաղյա իրեր ու հմայիլներ՝ կախելով հիվանդների վրա կամ բարձի տակ դնելով:

Բուժական ֆունկցիաները քննելիս քրիստոնեականի ու նախաքրիստոնեականի փոխձուլումը երևում է նաև Վանում տարածված հետևյալ հավատալիքում «ծննդկանի բարձի վրա ԱՍԵՂՆԵՐ, և ՆԱՐԵԿ, բարձի տակ ԵՐԿԱԹԵ կրակ խառնելու ՁՈՂ ՄԸ (շիշ) (կը դնեին), որ չար ոգին ծննդկանի ջիգարը չտաներ»[40] (ընդգծումներն իմն են—Հ. Թ.):

Ս. Նարեկի և երկաթյա «պահպանիչ» իրերի համագործակցությունը տարածված էր բազմաթիվ վայրերում: Ս. Նարեկի փոխարեն դնում էին Ս. Գիրք, սրբերի մասունքներ և այլն: Սակայն ամենուր երկաթյա իրերի գոյությունը պարտադիր նախապայման էր: Շատ հետաքրքիր է այս առումով նաև հետևյալ հավատալիքը: Մթության մեջ որևէ ամանից, կամ հատկապես առվից կամ գետից ջուր խմելիս չարքերի հարվածից խուսափելու համար

«խմելիս ջրի մեջ պետք է դնել ԵՌԱՇԵՂԲ ԴԱՆԱԿ կամ մի կտոր ԵՐԿԱԹ»[41] (ընդգծ. իմն է—Հ. Թ.):

Հմայական աղոթքներից մեկում հանդիպում ենք այսպիսի տողերի.

«Մեր տուն տիրոջ տուն է,
Պատերն հըմեն **էրկաթ է,**
Սներ հըմեն **պողպատ է,**
Քրիստոս (կամ մեկ ուրիշը) դռան պահապան է,
. . . . . .
Ա քա Մարիամ, հոտ ի՞նչ կէնես,
Իրեք պուռ դանակմ ունիմ,
Մեկը՝ սուտ սատանին,
Մեկը՝ գել գազանին,
Մեկն ա չար խափանին»[42] (ընդգծ. իմն են—Հ. Թ.):

Այս երկու օրինակներում ընդհանուր են երկաթի, եռաշեղբ (իրեք պուռ) դանակի հիշատակությունները: Հավատալիքում քրիստոնեական սրբի անվան հիշատակություն չկա, մինչդեռ հմայական աղոթքում հիշվում են Քրիստոսն ու Մարիամ Աստվածածինը: Աղոթքների տարբերակներում Քրիստոսի անվանը երբեմն փոխարինել է որևէ սրբի անուն: Այս պահը կարևոր է, քանզի ակնհայտորեն ապացուցում է այս երևույթի բազմաստվածությունից անցած լինելը: Ըստ անհրաժեշտության, կամ ըստ պաշտամունքի վայրի աղոթքի մեջ հիշատակվել էորոշակի չաստված, երևույթ, որն հետո փոխանցվել է քրիստոնեական շրջանին:

Ինչ վերաբերվում է եռաշեղբ դանակին, ապա սա, թերևս քրիստոնեական շրջանի հավելում է՝ Սուրբ Երրորդության հետ կապվող, որովհետև բուն հավատալիքում եթե այն եղած լիներ, ապա երկաթի կտորների համար նույնպես որոշակի թվաքանակ պիտի հիշատակվեր:

Երկաթի պահպանիչ հատկություններն ավելի ուժեղ են համարվել, եթե «նրանք գործադրվում են կամ պատրաստվում ուրբաթ կամ առանձնապես Ավագ Ուրբաթ օրը: Ապարանջաններ ու մատանիներ են գնում այնպիսի պողպատից, որին դարբինն Ավագ Ուրբաթ օրը մուրճով մի քանի անգամ հարվածել է»[43]: Պահպանական այսպիսի միջոցները կոչվել են ԱՐՈՒՐՔ, որը դարբինը շինում է միայն ուրբաթ օրերին: Այստեղից էլ ՈՒՐԲԱԹԱՐՈՒՐՔ անվանումը: Հետաքրքիր է, որ դարբինն աշխատելիս պետք է արթնանար վաղ առավոտյան և գործը սկսեր ու ավարտեր անխոս: Դարբնի այս լռակյացությունը այնքան ազդեցիկ է եղել, որ դրանից սկիզբ է առել ՈՒՐԲԱԹԱԽՈՍ բառը[44]: Մ. Աբեղյանը կարծում է, որ ուրբաթը թերևս նվիրված է եղել հին ամպրոպային աստծուն (հիշենք, որ նրա զենքերը համարվել են հրեղեն քարերն ու շիկացած երկաթը), այդ իսկ պատճառով ուրբաթարուրքները համարվել են ազդեցիկ հմայիլներ: Ըստ գերմանական հավատալիքների կայծակի խորհրդանիշերն ավելի ազդեցիկ են դիտվել հինգշաբթի և Դոնար չաստվածին նվիրված տոն օրերին[45]:

Ի վերջո քրիստոնեական շրջանում երկաթի պաշտամունքի վերապրուկներից կարելի է հիշատակել ևս երկուսը:

Դարերով Հայաստանում մեծագույն սրբություններ են դիտվել երկաթե Ս. Գեղարդը և Աշոտ Երկաթ թագավորի երկաթե խաչը: Առաջինը անմիջականորեն Հիսուս Քրիստոսի անձի հետ կապված լինելուց զատ ունի նաև

պաշտամունքային ծագման այլ խորը արմատներ: Բանն այն է, որ նիզակի (գեղարդի) պաշտամունքը եղել է ինչպես հին հայերի այնպես էլ շրջակա այլ ժողովուրդների մեջ: Մուսասիրի տաճարի մուտքի երկու կողմում կանգնեցված են եղել 2 երկարաձող նիզակներ «որպես կրոնական-սրբազան նշանակություն ունեցող առարկաներ»[46]: Հռոմեացիները հանդիսավոր կերպով նիզակ էին մատուցում հերոս ռազմիկին, կամ ավելի բարձր դաս փոխադրված ազատ քաղաքացուն, իսկ պատերազմում պարտվածներին ու գերիներին անցկացնում էին զույգ խոնարհեցրած նիզակների տակով: Ազատ ծնված զինվորի գերեզմանում նիզակ էին դնում: Նիզակով գուշակություններ են կատարել:

Ս. Գեղարդի, որպես նիզակապաշտության և երկաթապաշտության միաձուլման օրինակը կարևոր է, որովհետև սա արդեն ապացուցում է և խորհրդանշական (սիմվոլիկ), և հմայական (միստիկ) հավատալիքների միաձուլումը:

Ս. Գեղարդը ունի բացառիկ պաշտամունքային արժեք: Նրա անվամբ է վերանվանվել Այրիվանքը: Վերջինս լինելով Հայաստանի ամենաանառիկ վանքային համալիրներից մեկը հանգրվանն է եղել ոչ միայն ս. Գեղարդի, այլև բազմաթիվ ուրիշ (նյութական արժեքի տեսանկյունից առավել թանկարժեք) սրբությունների: Չնայած դրան Ս. Գեղարդն իր պաշտամունքային անկրկնելի արժեքի շնորհիվ «համարվել է Այրիվանքի ամենաարժեքավոր գանձը, և... երկաթե Գեղարդն արժանացել է արծաթագործության... հոյակապ պահարան-զարդի»[47]:

Աշոտ Երկաթի անվանումն իսկ արդեն խորհելու տեղիք է տալիս: Մինչև այժմ Էջմիածնի Մայր Տաճարի թանգարանում դրված Աշոտին վերագրվող երկաթե խաչը (որը ժողովրդին հայտնի է «Սևանի ս. Նշան» անվամբ, քանզի երկար ժամանակ պահվել է Սևանի վանքում), դեպի իրեն է բերում բազմաթիվ ուխտավորների: Հարյուր-հազարավոր ոսկե, արծաթե, բրոնզե և այլատեսակ խաչեր ժողովրդի աչքում այն զորությունը չունեն ինչ այս երկաթե խաչը: Ի դեպ, նույնիսկ ոչ մասնագետ աչքի համար ակներև է այս խաչի հնագույն շրջանին պատկանելու հանգամանքը: Նման կարծիք է հայտնում նաև արվեստաբան Մ. Ղազարյանը[48]:

Երկաթը դարեր ու դարեր օգտագործվելով մարդկային կենցաղի ամենաբազմազան ոլորտներում իր անհրաժեշտության և օգտակարության հետևանքով ձեռք է բերել պաշտամունքային բացառիկ արժեք, որը խորը արմատներ ունենալով ժողովրդական հավատալիքների զինանոցում ոչ միայն չի անհետացել, այլև փոխանցվելով քրիստոնեական շրջանին մտել է այս կրոնի մեջ, իր արձագանքներն ու վերապրուկները դրսևորել ընդհուպ մինչև մեր ժամանակները, տեղի տալով բազմաթիվ նոր հավատալիքների և ապրողությունների:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Խ. Սամուելյան**—Հին Հայաստանի կուլտուրան, 2-րդ հ., Եր.—1941 թ., էջ 11:
2. Երկաթ ասելով այսուհետև մեր հեղինակային բնագրում (ոչ մեջբերումներում) նկատի ենք ունենում նաև պողպատը:
3. **Խ. Սամուելյան**—նշվ. աշխ., էջ 276:
4. **Է. Խանզադյան**—Հայկական լեռնաշխարհի մշակույթը 3-րդ հազարամյակում. Եր.—1967 թ., էջ 59.

5. **Խ. Սամուելյան**—նշվ. աշխ.—էջ 12—13.
6. Անդ.—էջ 12.
7. Անդ.—էջ 14.
8. **Вяч. Вс. Иванов**—История славянских и балканских названий металлов. М., 1983 г., стр. 91 (տես նաև էջ40—45).
9. **Կ. Կերամ**—Աստվածներ, դամբարաններ, գիտնականներ. Եր. 1971 թ., էջ 215.
10. Мифы народов мира. М., 1982 г., т. 2, стр. 146—147.
11. Անդ.—էջ 147, 3-րդ այունակ.
12. **Խ. Սամուելյան**—նշվ. աշխ., էջ 45.
13. **Н. Марр**—Яфетические элементы в языках Армении. «Известия Ак. Наук», СПб., 1911 г. Թեև Ն. Մառի լեզվաբանական հայացքները քննադատության չեն դիմանում, կարևորը, սակայն մեզ համար երկաթի հետ կապված մեկնություններն են.
14. **Խ. Սամուելյան**—նշվ. աշխ.—էջ 276—278, նաև՝ Behlen H.—Der pflug und pflügen. 1904 թ.
15. **Խ. Սամուելյան**—նույնը.
16. Անդ.
17. **Մովսես Խորենացի**—Պատմ. հայոց, Թիֆլիս—1913 թ., էջ 190.
18. **Մ. Աբեղյան**—Երկեր, Ա հ., Եր. 1966 թ., էջ 156.
19. Անդ.
20. **Խ. Սամուելյան**—նշվ. աշխ., էջ 327, նաև՝ Ղ. Ալիշան—Հին հաւատք.., Վեն. 1895 թ., էջ 43.
21. **Մ Աբեղյան**—Երկեր, Է հ, էջ 78: Հետաքրքիր է, որ քաջքը և երկաթե ասեղը (մախաթը) դարձյալ միասին են հանդես գալիս այս հավատալիքում:
22. Հայ ազգագրություն և բանահյուսություն—պր. 2, Եր. 1970 թ., էջ 195, նաև՝ պր. 3, Եր. 1972 թ., էջ 64.
23. **Արտակ արքեպ. Մանուկյան**—Ջուրը կրոնական ծիսակատարության մեջ—Թեհրան, 1973 թ., էջ 38.
24. Հայ ազգագր. և բանահյուս.—պր. 3, էջ 26.
25. Տ. Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետին ճառք—Վեն. 1836 թ., էջ 186.
26. **Մ. Աբեղյան**—Է հ., էջ 74.
27. Անդ. էջ 75.
28. Հմմտ. «Զար աչք՝ չար փշին» երիցս կրկնվող բանաձևը, «Սասնա ծռեր» վեպում տարածված «Հաց ու գինին՝ Տեր Կենդանին» աղոթքային բանաձևումը: Հավանաբար հնագույն այս համառոտ աղոթքների վերականգնումը ջատագովվում էր քրիստոնեության ձևավորման շրջանում ևս՝ ի տարբերություն հրեական երկարաշունչ աղոթքների, փառաբանական ձոների և այլն: Սրա լավագույն վկայությունը Ս. Ավետարանում եղած հիշատակությունն է Հիսուս Քրիստոսի աղոթք սովորեցնելու մասին ,երբ ասում էր՝ «Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի շատախօս լինիք իբրեւ զհեթանոսսն» (Մատթ. Զ. 7). Եվ հենց քրիստոնեական ամենահիմնական աղոթքը՝ «Հայր Մերը» (Տերունական Աղոթքը) ընդամենը տաս պարբերություն (բան) ունի (տես՝ «Էջմիածին» ամսագիր, 1987 թ., Թ—Ժ, էջ 47).
29. Անշուշտ խիստ պայմանական են վերը նշված բաժանումները, և դրանք, անկասկած, փոխկապակցված են: Պարզապես տվյալ գործողության, խոսքային բանաձևի կամ իրավիճակի մեջ գերիշխող կիրառական կողմն էլ առաջնային է դիտվում:
30. **Տ. Նավասարդյանց**—Հայ ժողովրդական հեքիաթներ, VI գ., Թիֆլիս, 1890 թ., էջ 147.
31. **Մ. Աբեղյան**—Է. հ., էջ 98
32. **Կ. Մելիք-Փաշայան**—Անահիտ դիցուհու պաշտամունքը, Եր. 1963 թ., էջ 138—155.
33. Անդ. էջ 26.
34. Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս—1909 թ., էջ 31.
35. **Կ. Մելիք-Փաշայան**—նշվ. աշխ., էջ 62—63.
36. Անդ., էջ 58.
37. Անդ., 108—109.
38. Անդ., էջ 140.
39. Большая Медицинская Энциклопедия—т. 23, стр. 511 кол. 1515.
40. Հայ ազգագր. և բանահյուս., պր. 1, էջ 195.
41. **Մ. Աբեղյան,** Է. հ., էջ 33.
42. Անդ., էջ 35.

43. Անդ., էջ 75.
44. Անդ.
45. Ուրբաթ օրվա հմայական նշանակության քննությունը դուրս է մեր հարցի շրջանակներից և կարոտ այլ ուսումնասիրության: Այն, որ ուրբաթը մեծ տեղ է գրավել հմայական գործողությունների շարքում, ունի բազմաթիվ ապացույցներ: Օր. հին հայկական մի հմայական գիրք կոչվել է Ուրբաթագիրք, նրա հետևորդները՝ ուրբաթատեաք կամ ուրբաթալեզք (**Մ. Աբեղյան**—Անդ.): Ցարդ սուրճի մրուրով կամ խաղաթղթով գուշակություններ անողները ուրբաթը համարում են այն օրը, երբ գուշակությունն ամենաճիշտն է: Հավատալիք կա, որ ուրբաթ գիշերվա երազն անպայման կատարվում է և այլն:
46. **Խ. Սամուելյան**—նշվ. աշխ., էջ 65.
47. **Ս. Դավթյան**—Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Եր., 1981 թ., էջ 143.
48. **Մ. Ղազարյան**—Էջմիածնի հարստությունները—«Էջմիածին» ամս., 1987 թ., Թ—Ժ, էջ 62: